«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Երգի կիրառումը ֆրանսերենի ուսուցման ընթացքում

Առարկա՝ Ֆրանսերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Մելիքյան Սոֆյա

Ղեկավար՝ Քնարիկ Պետրոսյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոց

Երևան-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածական մաս----------3

1.Երաժշտություն-ֆրանսերեն միջառարկայական կապերը: Տեսամեթոդական ուսումնասիրություն----------4

2.Երգերով ուսուցումը ֆրանսերենի դասին: Հետազոտական մաս----------7

Եզրափակիչ մաս----------9

Օգտագործված գրականության ցանկ----------10

Ներածական մաս:Հանրակրթական դպրոցում օտար լեզվի դասավանդումը մեծ նշանակություն ունի սովորողների լեզվական գիտելիքների, հաղորդակցական հմտությունների ձեռքբերման և լեզվամտածողության ձևավորման համար: Ժամանակակից սովորողները բարձր են գնահատում օտար լեզվի իմացությունը, նրանց համար շոշափելի հաղթանակ է օտար լեզվով ազատ հաղորդակցվելու կարողությունը: Սակայն նկատենք, որ հատկապես կրտսեր դպրոցում սովորողները կարող են բախվել որոշակի դժվարությունների, ուստի նպատակահարմար է, որ ուսուցիչն ուսումնական նյութի հաղորդման այլընտրանքային եղանակներ դիտարկի: Օարինակ՝ երաժշտության հետ միջառարկայական կապերի ապահովմամբ ուսումնասիվող նյութը դառնում է առավել հասանելի, մատչելի, սովորողը մեծ հետաքրքրությամբ է սովորում օտար լեզվով երգերը: Արդյունքում՝ զարգանում է վերջինիս լեզվական ու հաղորդակցական հմտություններն ու մշակութային կարողունակությունը: Հետազոտության թեման արդիական կարելի է համարել հենց միջառարկայական կապերի ապահովմամբ ուսուցման անհրաժե'տության կարևորմամբ, ինչը թույլ կտա, որ սովորողներն առավել սիրեն առարկան, հետաքրքրվեն ու մոտիվացվեն:

Սովորողների մոտիվացիայի, առաջադիմության բարձրացման համար ուսուցիչն ամեն կերպ պետք է ընդառաջ գնա կրթական նորարարություններին, դասի պլանավորման հիմքում դնի ժամանակակից դասավանդման մեթոդներ, որպեսզի դասապրոցեսը սովորողի համար հետաքրքիր լինի: Այս վերջնարդյունքը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք, որտեղ կարևոր են և' սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, և' ուսուցչի մասնագիտական ու մարդկային որակները:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել երգերով ուսուցման հնարավորությունները ֆրանսերենի դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրը:

- Դիտարկել երաժշտություն-ֆրանսերեն արդյունավետ միջառարկայական կապերի ապահովման եղանակները:

1. Երաժշտություն-ֆրանսերեն միջառարկայական կապերը: Տեսամեթոդական ուսումնասիրություն

Յուրաքանչյուր օտար լեզու արտացոլում է իր լեզվակիր ժողովրդի մշակույթը, լեզվամտածողությունը, հանդիսանում է այլ ժողովուրդներին սեփական մշակույթը փոխանցելու, հասանելի դարձնելու միջոց, նպաստում է միջմշակութային դրական հարաբերությունների ձևավորմանը: Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը, լեզվական կարողունակությունը: Սովորելով օտար լեզու՝ դպրոցականները նախնական պատկերացումներ են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն: Բացի այդ, օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է անձնավորության արժեքային կողմնորոշիչների, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով[1]: Միևնույն ժամանակ օտար լեզվի տիրապետումը նպաստում է սովորողների համակողմանի զարգացմանը, ինտեգրված ուսուցման համար ստեղծում է նպաստավոր պայմաններ՝ նպաստելով աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը: Հենց սրանում է դրսևորվում լեզվական ուսումնական առարկաների փոխազդեցությունը, ինչը նպաստում է դպրոցականների լեզվաբանական կրթության հիմունքների ձևավորմանը: Որպես ուսումնական առարկա իր կարևորությունն ունի նաև «Ֆրանսերենը», որը Հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական լեզվախմբի լեզուներից է: Այն համարվում է մայրենի լեզու 76 միլիոն մարդու համար, մոտ 235 միլիոն մարդ այն կիրառում է առօրյա կյանքում: Ֆրանսերենն աշխարհում ֆրանսիական մշակույթի և մտածողության հիմնական շարժիչն է, ունի գրականության և գիտական միջազգային լեզվի երկար պատմություն: Բացի դա, ֆրանսերենը հանդիսանում է մի շարք միջազգային կազմակերպությունների հիմնական կամ երկրորդական լեզուն՝ ներառյալ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության, ՆԱՏՕ-ի, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Միջազգային օլիմպիական կոմիտեի և Կարմիր խաչի

[1] Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:

միջազգային կոմիտեի: Այսպիսով, կարծում ենք, որ հենց վերը թվարկված հանգամանքները կարող են մոտիվացիայի աղբյուր հանդիսանալ, որպեսզի սովորողները հետաքրքրվեն ֆրանսերենով, ֆրանսիական մշակույթով, գրականությանբ: Կրտսեր դպրոցում ֆրանսերենի ուսուցումը բավականին արդյունավետ կարելի է կազմակերպել միջառարկայական կապերի ապահովման միջոցով: Ուսումնական գործընթացում սովորողների մղումները ձևավորվում են նրանց կարիքների և հետաքրքրությունների հիմքով՝ ուսուցիչը պետք է բոլոր ջանքերն ուղղի սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Իր կարիքները բավարարելու՝շփվելու, սովորելու և աշխատելու համար մարդը պետք է ընկալի աշխարհը, ուշադրություն դարձնի գործունեության որոշակի բաղադրիչների վրա, պատկերացնի, թե ինչ է պետք անել, հիշի, մտածի և արտահայտվի: Հետևաբար, առանց ճանաչողական կարողությունների, մարդու գործունեությունը անհնար է: Ճանաչողական կարողությունները զարգանում են գործունեության մեջ: Կարող ենք ասել, որ սովորողին անհրաժեշտ մի շարք կարողությունների և հմտությունների՝ այդ թվում նաև մետաճանաչողության զարգացման համար բավականին արդյունավետ միջոց է ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի ստեղծումը:

Դասի ընթացքում միջառարկայական կապերի ճիշտ համադրումն ու կիրառումը սովորողին տալիս է հնարավորություն մեկ դասի շրջանակներում ստանալ մի շարք կարողունակություններ, գործնական աշխատանքների ժամանակ կիրառել դրանք: միջառարկայական կապեր ստեղծելու արդյունավետ եղանակ է ինտեգրված դասերի անցկացումը: Միջառարկայական կապերի *կառուցողական գործառույթն* այն է, որ նրանց օգնությամբ ուսուցիչը բարելավում է ուսումնական նյութի բովանդակությունը, կրթության կազմակերպման մեթոդները և ձևերը: Միջառարկայական կապերի իրականացումը պահանջում է ուսուցիչների համատեղ պլանավորում կրթական և արտադասարանական աշխատանքի բարդ ձևեր, որոնք ենթադրում են դասագրքերի և հարակից առարկաների ծրագրերի նրանց իմացություն[2]: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակտեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ: Ինտեգրված դասի

[2] Коменский Я. А. Избранные педагогические сочинения, 1955, с. 287.

պլանավորումը ենթադրում է տարբեր առարկաների ուսուցիչների համագործակցություն: Ուսումնական հաստատության ուսուցիչը համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[3]: Միջառարկայական կապերի զարգացման գործառույթը որոշվում է նրանց դերով սովորողների համակարգային և ստեղծագործական մտածողության զարգացման, նրանց ճանաչողական գործունեության ձևավորման, անկախության և ուսման նկատմամբ հետաքրքրության ձևավորման մեջ[4] Օտար լեզվի ուսուցումը երգերի միջոցով կարող է խթանել սովորողների մշակութային կարողունակության զարգացմանը, ինչը ենթադրում է, որ սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ[5]:

Միևնույն ժամանակ՝ ժողովրդական, դասական և ժամանակակից երաժշտության բարձր գեղարվեստական արժեք ունեցող նմուշներն ունկնդրելու միջոցով սովորողների մեջ ձևավորվում է գեղագիտական ճաշակ,վերջինս ծանոթանում է օտար մշակույթի առանձնահատկություններին: Այսպիսով Երաժշության ուսուցչի հետ համագործակցելով՝ ֆրանսերենի ուսուցիչը կարող է սովորողներին սովորեցնել այլ մշակույթին, երգերին, ինչը կխթանի նաև բառապաշարի հարստացման գործընթացը:

[3] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:
[4] Кабалевский Д.Б. «Как рассказывать детям о музыке» М.: Просвещение, 2005. с. 253
[5] ՀՀ Կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում

2. Երգերով ուսուցումը ֆրանսերենի դասին: Հետազոտական համատեքստ

Մեր աշխատանքային գործունեության ընթացքում ևս դիմում ենք երգերի օգնությանը՝ դասն առավել պատկերավոր ու բազմաբաղադրիչ դարձնելու համար: Դիտարկենք մե կողմից առանձնացված մի քանի ֆրանսերեն երգեր, որոնք կարելի է կիրառել կրտսեր դպրոցում:

Տառուսուցման դասերին «Alphabet français» երգի կատարումը հեշտացնում է տառերի և հնչյունների յուրացումը և ճիշտ արտասանությունը, ինչպես նաև ապահովում դրական լիցքեր՝ դասին: Նկատվում է, թե ինչպես աշակերտները աստիճանաբար դադարում են շփոթել անգլերեն «էյ», «բի», «սի»... և ֆրանսերեն «ա», «բե». «սէ»... տառերի արտասանությունը: Կարծում ենք՝ սա միաժամանակ միջառարկայական կապեր և համեմատության զուգահեռներ ստեղծելու լավ հնարավորություն է:

https://youtu.be/akKplmnr01M?si=rEgHHEEUbQNghnzl

Առանձնահատուկ հաճույքով են աշակերտները սովորում և կատարում «Bonjour, comment ça va?» երգը: «Բարև՛», քանի որ դրանով է սկսվում յուրաքանչյուր հանդիպում: Երգի բանալի բառերը միջանձնային հաղորդակցման կարևոր բաղադրիչներն են՝ բարև՛, ինչպե՞ս ես, շնորհակալությու՛ն, հրաշալի, ուրախ եմ՝ տեսնել քեզ(ձեզ) և այլն:

https://youtu.be/q6mJ0TPGf64?si=DTWjQlthPv_n859r

«J'aime papa» երգն իր կառուցվածքի պարզությամբ, կրկնվող տողերով և հեշտ մտապահվող բառապաշարով երգ է: Երաժշտությունը ևս հեշտ մտապահվող է: Տեքստը ներկայացնում է մեծ ընտանիքի գրեթե բոլոր անդամներին և մոտ հարազատներին: Երգի բազմաթիվ կատարումներից և անգիր սովորելուց հետո կարելի է դասարանում կազմակերպել բառային աշխատանք: Տեքստից դուրս են գրվում ընտանիքի անդամները և զուգահեռներ են տարվում աշակերտի ընտանիքի և երգի միջև, ներկայացնում են դերային խաղեր:

https://youtu.be/hK-e8s-YxMY?si=5f9BbT6irCCDoJ34

Մարմնի մասերի անունները սովորելու հրաշալի հնարավորություն է տալիս «Jean petit qui danse» երգի ուսուցումը: Ժողովրդական ֆոլկլորային այս երգը, որ ֆրանսիացիների խնջույքների ամենաընդունված կատարումներից է, առաջին հայացքից կարող է զուտ մանկական երգ ու պար թվալ, սակայն այն սիրով կատարում են բոլոր տարիքի մարդիկ: Ազգային մշակույթի այս յուրօրինակ ժանրը ունի ուրախ տրամադրություն և պարելու ցանկություն առաջացնելու հատկություն:

https://youtu.be/n0j1oKhVPYE?si=vUqgn_ppN2JN0iBp

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Խոսելով դպրոցականների ակտիվ բառապաշարի հարստացման, ֆրանսերենով հաղորդակցման հմտությունների զարգացման գործում ֆրանսերեն երգերի դերի մասին՝ հանդես գանք մի քանի արձանագրումներով: Տարրական դասարաններում ֆրանսերենի ուսուցմանը նպաստում են փոքրիկ բանաստեղծությունները, երգերը, խաղերը, որոնք կարող են օգնել անհրաժեշտ բառապաշարի ներմուծմանն ու ամրապնդմանը: Դրանք լավագույն միջոց են ցածր տարիքի երեխաների մոտ լեզվի նկատմամբ հետաքրքրություն և սեր առաջացնելու, ինչպես նաև դասապրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու համար: Ֆրանսերենի ուսուցման սկզբնական շրջանը ամենապատասխանատուն է, քանի որ այստեղ է դրվում հետագա կրթության համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների հիմքը: Ֆրանսերենին տիրապետելու հաջողությունը կախված է լեզվի ուսուցման ճիշտ դրվածքից և նրա գործնական ուղղվածությունից: Սկզբնական շրջանում են ձևավորվում, զարգանում և մշակվում շրջապատն ու շրջապատող մարդկանց ճանաչելու, դիմացինի ասածը հասկանալու, հարցերին պատասխանելու, ինքնուրույն արտահայտվելու, զրույցի մեջ մտնելու հմտություններն ու կարողությունները: Ուստի միջառարկայական կապերով ուսուցումը կարող է խթանել վերը բերված նպատակներին հաստելու համար:

Համոզված ենք, որ մեր հանրակրթական դպրոցների ֆրանսերեն դասավանդող ուսուցիչները կշարունակեն ջանասիրաբար փնտրել և կիրառել բոլոր ժամանակակից այլընտրանքային մեթոդները՝ աշակերտների՝ ֆրանսերեն սովորելու մոտիվացիան մշտապես բարձրացնելու նպատակով: Հակառակ դեպքում սովորողը կհիասթափվի առարկայից և չի ունենա սովորելու մոտիվացիա: Այս պարագայում խրախուսում ենք մանկավարժական աշխատողների, մասնավորապես՝ երաժշտության և ֆրանսերեն լեզվի ուսուցիչների նպատակային համագործակցությունը՝ ինտեգրված դասեր, ճանաչողական ու ցուցադրական միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու առումով: Հենց նման համագործակցությամբ է հնարավոր բարձրացնել սովորողների աշխատունակությունը և սիրել տալ ուսումնական առարկան:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:
3. ՀՀ Կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:
4. Коменский Я. А. Избранные педагогические сочинения, 1955, с. 287.
5. Кабалевский Д.Б. «Как рассказывать детям о музыке» М.: Просвещение, 2005. с. 253.